5. ԳՈՐԾԴԻՆ ԼԵՒՈՆԵՍՆՑ. Գծագրութիւն եւ նկարչութիւն. առաջին մաս. Տրփխիս, 1905 էջ 52,

Տարբական դպրոցների դասընթացի մէջ պատշաճաւոր տեղ են բռնում և գծագրութիւնն ու նկարչութիւնը։ Գծագրութիւնն իբրև հիմք ծառայելով նկարչութեան՝ սովորեցնում է կանոնաւոր և անկանոն գծեր քաշելու վարժութիւնը. այսպիսի վարժութիւնների շնորհիւ միայն ապագայում մանկան ձեռքը կսովորի ամբողջ մարմնի ձևերը նկարել։ Թէպէտ վաղուց արդէն այս առարկաներն աւանդւում են մեր՝ թէ միջնակարգ և թէ ծխական դպրոցներում, բայց և այնպէս մինչև այժմ հայոց լեզուով կազմուած կանոնաւոր ու մատչելի ձեռնարկներ չունէինք գծագրութեան և նկարչութեան համար։ Գէորգեան ճեմարանի ուսուցիչ պ. Լևոնեանի կազմած ձեռնարկը լրացնում է այդ թերին. առաջին մասը կազմուած է նպատակայարմար կերպով. բացատրութիւնները պարզ և ամփոփ են. լեզուն կանոնաւոր ու հասկանալի։ Գրքոյկի արտաքինը նոյնպէս լաւ է, նկարները մաքուր և որոշ։

---

6. Մ. Ց. ՁԻՈՑ ա. Քիւրտ պէկ (գծեր հայ-քրդական կեանքէն) երկ. տպ. Ս. Պետերբուրգ 1904 թ., բ. Քիւրտ պէկ բ. հատորիկ. Արամը։

Շատի գրքոյկները ընթերցողի առաջ բաց են անում մեր այժմեան հանգամանքներում համեմատաբար արդէն նսեմացած հայի վէրքերը. մոռացուած թշուառ Տաճկահայերի խրոնիկական վէրքերը...։ Հեղինակն իբրև Տաճկահայ քաջ տեղեակ է հայ-քրդական յարաբերութիւններին և ճշտութեամբ նկարագրում է քրդական բարքերն ու խժդժութիւնները, որոնց պատճառով «Բալու գաւառը ԺԹ. դարի սկզբներին ունէր 253 գիւղ, որոնցից 120-ը զուտ հայաբնակ էին։ Մնացեալ 133 գիւղերում կը բնակէին հայ և քիւրտ խառն։ Այդ 253 գիւղերում բնակուող հայերի ընդհանրութիւնն էր Բալու քաղաքի հայ բնակիչների հետ 60—70 հազար։ Իսկ քրդերինը՝ մօտ 30 հազար հոգի։ Այժմ այդ գիւղերէն գոյութիւն ունին միայն 248 գիւղեր, որոնցմէ 200-ը քրդաբնակ են՝ անխառն, և միայն 48-ը հայաբնակ։ Նոյն իսկ այդ 48 գիւղերէն մի քանիսը հայ և քիւրդ խառն կը բնակին։ Այդ գաւառում այժմեան հայերի թիւն է ընդամենը հազիւ 17—18 հազար. մինչդեռ քրդերի թիւը 60—65 հազարի կը յանգի...» էջ 5—6։

Ուրեմն մօտ մի դար ժամանակամիջոցի ընթացքում հայաբնակ 120 գիւղից մնացել է միայն 48 գիւղ, այն էլ խառն